

չեց ազամանդիկ սիրտն յոսկի բերանն . լռեցուց (թէ և լացուց) զինքն յորդորող, պաշտող ու պաշտպանող եպիսկոպոսները, գղերը, սարկաւագուհիները ու բանին տեղեակ եղողքը : Իր լեզուին ճարտարութիւնն և ոյժը՝ շատ անգամ փորձեր էին, բայց սրտին այսքան պնդութեան և մեծութեան դեռ անփորձ էին . ափշեցան, ափիւբերան եղան, յաղթուեցան, անգամ մ'այլ դաս սուին իրենց աննման վարպետէն, որ մատուցն կու ցուցընէր զերկրիս բոլորը, թէ « Տեառն է երկիր լրիւ իւրով » . արդարն ուր ալ որ ըլլայ, միշտ նոյն է, կամ միշտ պանդուխտ կամ ոչ երբէք . և բերնոյն կրկնէր իր պանծալի պարոյրը, « Փառք քեզ Աստուած, յա » զազա ամենայնի » : Եւ ըստ սրտին՝ անայլալակ և զուարթ զիմք իջնելով յաթոռոյն, յայն աթոռոյն՝ որ ոչ յառաջ և ոչ ետքը իրեն հաւասար բազմական ունեցաւ, զատուեցաւ 'ի սիրելեացն : — Իսկ 'ի թշնամեացն . — իր աւտուածային օրինակին նման՝ նկատելով զանոնք՝ որք զահալէժ ընել կ'ուզէին զինքն, « և նա անցեալ ընդ մէջ » նոցա զնայր » :

Հ. Դ. Մ. ԱԼԻՇԱՆ

Կը շարունակուի :

Դժոռարին վիրաբուժութիւնն մը .

Քանի մ'ամիս կայ որ Պրուքսելի կենդանաբանական ընկերութեան Ատլասի գեղեցիկ առիւծն ծանր հիւանդութենէ մը բռնուեր էր . ախտն շատ զայրանալով, անհրաժեշտ հարկ համարեր էին ճիրանը կտրելը . Պ. Թիեռնէս այն ընկերութեան անասնաբոյժն իր վրայ առաւ այս դժուար գործողութիւնը, որու համար մասնաւոր կազմած մ'ալ չինել տուաւ . որ էր կաղնիէ՝ հաստ երկրթէ շրջանակներով նեղ սնտուկ մը, այնպէս որ կենդանին չիկրնայ մէջը զառնալ : Մնտուկին երկու կողմերը մոնալու ելլալու բացուող վանդակներ

կային . յատակն շարժուն, ու վանդակագործով մը ծածկած էր, զոր թէ դուրս քաշէին, կենդանւոյն թաթերն ծակերէն դուրս կ'ելլէր, ան ժամանակ սնտուկին շարժուն ձեղունն երկաթէ ուժով պտուտակով մը ցածնալով պիտի սեղմէր զհիւանդը՝ որ անշարժ կենայ և չիկրնայ իրեն քաշել սնտուկէն դուրս ելած թաթերը :

Թէպէտ այս կազմածն առաջուց առիւծին դառագողին մէջ դրուած էր, բայց նա քանի մ'օր անօթութիւն քաշելէն վերջը յանձն առաւ անոր մէջ մտնալը : Պ. Թիեռնէսի իմաց տրուելով եկաւ՝ անասնաբուժութեան դպրոցին աշակերտներէն հինգ հոգի հետը առած : Վերջը սկսան ձեղունը իջեցնել, և շարժուն տախտակը քաշեցին . երբ կենդանւոյն թաթերն սնտուկէն դուրս ընկան, սնտուկը մէկ կողման վրայ դարձուցին . և վիրաբոյժն ետեւի թաթերէն մէկը ուժով մը բռնել տալով՝ սկսաւ կտրել ըղունդը . թէպէտ առիւծն անհամբերութեան շարժումները պակաս չըրաւ, բայց որչափ որ կատաղութեան վախ կար այնչափ չեղաւ . և հետզհետէ միւս թաթերուն վրայ ալ կատարուեցաւ գործողութիւնը, վասն զի չորսն ալ չարաչար վիրաւորուեր էին : Բազմաթիւ ժողովուրդ ներկայ էր այս տեսարանին որ շատ սրտաշարժ էր . կը մռնչէր առիւծն երբեմն երբեմն՝ բոլորովին անսովոր, յանկարծական և ահեղ կերպով մը՝ որ թնդանօթի որոտման կը նմանէր : Երբ առջի թաթին գործողութիւնն լրմնեցաւ, կարծես թէ իմացաւ որ խնամք կը տանին ցաւերուն . իր հոգացող պահապանն ալ, զոր շատ կը սիրէր, և գլխուն զին կեցած հանդարտեցնելու համար հետը կը խօսէր, իրաւցնէ ալ ազդեցութիւն կ'ընէր իր սոսկալի հիւանդին վրայ : Վերջապէս աղէկ յաջողեցաւ այս դժուարին բժշկութիւնն :